ուի, Դաւիթ մարգարէի և Յակոբ առաքելոյ տօնին, և Վարդավառին։ Թէոդորոս Բ.ի տապանագիրն է հետևեալը.

«Թէոդորոս վեհ ընտիր և հոգևոր,
Ի յերկրէն Վանայ յոյժ հռչակաւոր.
Տիպ Լուսաւորչի, պարթև փառաւոր.
Մաքրական վարուք և պսակաւոր։
Նըստեալ ի յԱթոռ Սրբոյն Սիօնի,
Եղբօր Տեառն եղև յաջորդ անուանի,
Ջանայր չէն պահել զԱթոռն փրկչի.
Այլ տևեալ ամօք միայն տասն և ութի։
Դարձեալ ստացաւ սա զմիր տեղի.
Տաճար ծննդեան և Աւծանի.։
Իսկ հասեալ ի տիս եօթնեկ տասնեկի
Սլացաւ ի մէնջ ի բուն հայրենի.
Յամի Տեառն 1819, յՕգոստոսի 22։»

Թէոդորոս Բ.ի օրով յիշատակագիր մը (ՄՁ. թ. 18) կը գրէ թէ՝ «յորում ժամանակի ի մերս թիւ ՌՄԿԱ (= 1812)ին տէրունեան ուխտաւորացն նաւն բեկաւ. սակս անօրինակ մեղաց».

Թէոդորոս պտրք.ի գահակալութեան ժամանակ Ս. Յակոբի Միաբանութեան գլխաւոր անդամներու ցուցակն է հետևեալը իւրաքանչիւրն իր պաշտօնովը, (ՄՁ. թ. 85). «Վէֆիզ Կիրակոս վրդ. նախկին դարպասճի Զաքարիա եպս. ծերունի, Աւետիք եպս. ծերունի, Աբրահամ եպս. ծերունի, Յակոբ եպս. լուսաբար Պաղտասար եպս. Պօղոս երբեմն Վէֆիզ Պետրոս եպս. հանգուցեալ Պետրոս պտրք.ի հարազատ Գէորգ եպս. դարպասճի Ստեփանոս վրդ. լոյսհանող Մատթէոս վրդ. սբ. Յարութեան ըէյիզ Սահակ վրդ. ժամօրհնող Սիմէոն վրդ. Նուիրակ Միհրան վրդ. Նուիրակ Թովմաս վրդ. Նուիրակ Կարապետ վրդ. չուխաճի Մկրտիչ վրդ. սբ. Աւծանի ըէյիզ Խաչատուր վրդ. արանց խոստովանահայր Զաքարիա վրդ. կանանց խոստովանահայր Յարութիւն վրդ. մոմճի Յակոբ վրդ. Մսրայ Առաջնորդ Յարութիւն վրդ. վանցի Աբրահամ վրդ. Միհրան վրդ. Կեսարացի Մկրտիչ վրդ. ճգնաւոր Մկրտիչ վրդ. քիւրտ Յովհաննէս վրդ. ժամասաց Յովհաննէս վրդ. կարճ Յարութիւն վրդ. Վանցի Վարդան վրդ. քէօսէ Յովհաննէս վրդ. Դաւիթ վրդ. Աղաշկերտցի, Սահակ վրդ. Թոխատցի, Աւետն վրդ. Կիպրացի, մասճի Գէորգ վրդ. ծերունի Յոհան վրդ. Սուրիաս վրդ. սբ. Հրեշտակապետի ըէ-